

Խաղողի վազի տերևային մակերեսը

կապված հողի ջրային ռեժիմի հետ

Գ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն , Ա. Ն. Հ ա կ ո բ յ ա ն

Հայտնի է, որ բույսերում օրգանական նյութերի կուտակման քանակն ու որակը կապված է տերևային մակերեսից:

Աշխատանքի նպատակն է՝ պարզել խաղողի վազի բերքատվության և բերքի որակի կախվածությունը հողի խոնավության շարժունությունից (գինեամկայից) և տերևային մակերեսից: Ուսումնասիրությունները կատարվել են Մարտունու շրջանի կարվին տեղամասում:

Նյութը և մեթոդը:

Հողի խոնավությունը որոշվել է կշռային եղանակներով, իսկ տերևային մակերեսը՝ Լազարևսկու մեթոդով: Փորձարկումները կատարվել են երեք կրկնողությամբ, ըստ որում հողի խոնավությունը ուսումնասիրվել է ապրիլի 5-ից մինչև հոկտեմբերի 15-ը, հաշվի առնելով վազի զարգացման փուլերը: Տերևային մակերեսը ուսումնասիրվել է վեգետացիայի լնթացքում երեք անգամ՝ հունիսի 20-25-ը, հուլիսի 20-25-ը և սեպտեմբերի 5-10-ը, այսինքն տերևային մակերեսի բուռն աճի պրոցեսների գործնականորեն դադարի շրջաններում և պտուղների հատումագման ժամանակ: Հողի խոնավությունը որոշվել է մինչև 200 սմ խորության վրա: Հողի մոնիշը վերցվել է Ս. Ֆ. Նեգովելովսի ստեղծած բուրով: Ուսումնասիրվել է որածիրելի խաղողի աղբյուր:

Արդյունքները և քննարկումը:

Ուսումնասիրություններից պարզվել է (աղյուսակ 1), որ բողբոջների բացման ժամանակ 200 սմ խորության վրա յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում եղել է 22,58% ջուր: Ծաղկման ժամանակ գրանցվել է խոնավության իջնույ՝ մինչև 17,73%: Ծաղկումից հետո այգին ջրվել է՝ հեկտարին տրվելով 1100 մ³ ջուր, որի շնորհիվ հողի խոնավությունը նորից բարձրացել է մինչև 20,12%: Հողի այդ խոնավությունը միանգամայն բարենպաստ է խաղողի աճի ու զարգացման համար:

Խաղողի հատումագման շրջանում՝ օգոստոսի յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում մնացել է 11,64% ջուր, իսկ սեպտեմբերի 5-ին այն նվազել է մինչև 9,95%:

Խաղողի վազերն ի վիճակի են հողից վերցնելու շատ դժվար յուրացվող ջուրը, նույնիսկ, եթե հողի խոնավությունը մինչև 8,6% է (3) (Գ. Ա. Հակոբյան, 1985թ.): Բերքահավաքի ժամանակ հողում մնացել է 9,3% ջուր:

Խոնավությունը վերին շերտերում, որպես օրինաչափություն, ձմեռան ավելի շատ է կուտակվում, քան ստորին շերտերում: Սակայն

վեգետացիայի ընթացքում, ընդհակառակը, ջուրը վեր շերտերից ավելի շատ է ծախսվում: Կայանաավորված է արմատային համակարգ տարածմամբ (5), (4):

Ձրովի պայմաններում, յուրաքանչյուր կիլոգրամ խաղողի համար տերևային մակերեսը հունիսի 25-ին եղել է 1,3 մ², հուլիսի 25-ին՝ 1,5 մ², սեպտեմբերի 5-ին՝ 1,4 մ²: Հողի նման ջրային ռեժիմի ու տերևային մակերեսի դեպքում հեկտարից ստացվել է 18 գննտներ խաղող, 21,6% շաքարայնությամբ, 7,0 գ թթվայնությամբ: (Աղյուսակ 2):

Միանգամայն այլ պատկեր է ստացվել անջրի պայմաններում: Այս դեպքում, նույն ժամանակաշրջանում բողբոջների բացման ժամանակ յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում խոնավությունը եղել է 20,57%, որը 2,01%-ով քիչ է, քան ջրով հողամասում:

Վերջինում խաղողի վազի և պտղաբերման համար հողի խոնավությունը օպտիմալ էր: Վազի զարգացման փուլերում հողի խոնավությունը աստիճանաբար նվազել է: Այսպես՝ հունիսի 5-ին յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում մնացել է 15,68%, հուլիսի 5-ին՝ 13,48%, հուլիսի 25-ին՝ 11,88%, օգոստոսի 5-ին՝ 9,28% խոնավություն: Պտուղների հատումացման շրջաններում (5/VIII - 5/IX) հողի խոնավությունը դարձել է գործնականորեն անմատչելի:

Լ. Ա. Ֆոմենկոն (1970թ.) ուսումնասիրելով նման խոնավության պայմաններում տերևային ֆոտոսինթեզի օրվա շարժունությունը, պարզել է, որ ցերեկները, գլխավորապես արևոտ օրերին, հերձանքները կամ չեն բացվում և չեն աշխատում կամ էլ բացվում են միայն առավոտյան և երեկոյան ժամերին: Խաղողի վազի այդ հատկությունը պայմանավորված է նրանով, որ տերևներում խոնավությունը չգոլորշանա: Բացի դրանից վազն իր գոյությունը պահպանելու համար կրճատում է տերևների մի մասը՝ գլխավորապես ծեր տերևները:

Այսպես, անջրդի տարբերակում հունիսի յուրաքանչյուր 1 կգ խաղողին ընկել է 1,2 մ² տերևային մակերես, հուլիսին՝ 0,7 մ², սեպտեմբերին՝ 0,5 մ² (աղյուսակ 2): Գինեամկանները (կ. Ստոն-1984թ. Ջաքարովա-1984թ., Գ. Ա. Հակոբյան-1989թ.) (1, 2, 3) պարզել են, որ յուրաքանչյուր 1 կգ խաղողի համար վազը պետք է ունենա ոչ պակաս քան 1,2 մ² տերևային մակերես: Դրանից քիչ լինելու դեպքում խաղողը ունենում է ցածր որակ:

Այսպիսով, անջրդի տարբերակում ուսումնասիրվող հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 21,8% շաքարայնությամբ, 7,5 գ թթվայնությամբ, 93 գ. խաղող: Ստացված արդյունքներից նրևում է, որ անջրդի տարբերակում խաղողի քանակությունը բավականին քիչ է:

Հաշվի առնելով, որ Ղարաբաղի հարթավայրային ու նախալեռնային գոտիներում

անջրդի պայմաններում խաղողի վազները տուժվում են հողային և օդային նրաշտից, ապա անհրաժեշտ է.

1. Ջրդի դարձնել բոլոր խաղողի այգիները:

2. Շատ խոնավություն կուտակելու համար ագրոտեխնիկական փորձարկումները կատարել ձմեռվա ընթացքում:

Գրականություն

1. Ջարարովա Ե.— հաղողի վազի ձևավորումը, էություն և ծագումը: Ռուստով, 1984, 204-(211) Ստոն Կ.—վազի տերևային մակերեսի նշանակությունը, Երևան. 1984 (142 - 154):
- Վալդբյան Գ. Ա.—Դոկտորական ատենախոսություն, 1989 :
- Растение и вода — перевод с английского А. Д. Воронина и И. И. Суднищина. Под редакцией д.ф.м. наук Г. Ф. Хильми, Ленинград, 1987 (96-98).
- Gardner R- Relation of temperature to moisture tension of soil. Soil sei. Vol 79, N 04. 1985, p.257-265.
6. Фоменко Л. С.—фотосинтетическая продуктивность винограда в зависимости от конструкций куста- Краснодар, 1970 (стр. 7-8).

Лиственная поверхность виноградника связана с земляным и водным режимом

Резюме

Г. А. Акопян, А. И. Акопян

Отсюда вытекает, что для каждого

килограмма винограда виноградник должен иметь не менее, чем 1,2 м² лиственной поверхности. В случае меньшей поверхности, виноград имеет низкое качество, т. к. в равнинах и подгорных зонах Карабаха в неполевых условиях, виноградники страдают от земляной и воздушной засухи. Для этого необходимо:

1. Сделать полевыми все виноградные сады.
2. Агротехнические эксперименты проводить зимой для большого накопления сырости.

**Հողի ջրային ռեժիմի կախվածությունը վազի
զարգացման տարրեր փուլերից**

Աղյուսակ 1

Հողի զենեակեր կան հարկեր ներք	Բուրոցների բազմաթիվ ժամանակ		Ծաղկման ժամանակ 5/ VI	Շիվերի և սլաուդների աճի շրջան			Պատուհանի հատման ման շրջան 5/ IX	Բերքատու վազի շրջան 10 / X
	5 / IV	5 / V		5 / VII	25 / VII	5 / VIII		
Զրուկի աղյուսակ 1600մ ² տարածման հորմոնով								
A - 0 - 60	26, 77	21, 73	16, 75	25, 1	13, 8	10, 42	9, 13	8, 96
B- 60 - 80	24, 5	23, 23	18, 87	23, 06	15, 16	11, 86	10, 2	9, 66
BC-80 - 100	22, 67	21, 96	19, 16	17, 56	14, 3	12, 26	10, 56	9, 73
C - 100-200	16, 37	17, 75	16, 14	14, 75	12, 94	12, 03	9, 92	9, 86
Միջինը	22, 58	21, 16	17, 73	20, 12	14, 05	11, 64	9, 95	9, 3

Անցյալի

A - 0- 60	24, 77	17, 7	15	13, 83	10, 63	8, 5	8, 3	7, 27
B- 60- 80	21, 77	22, 3	16, 4	14, 7	12, 6	9, 6	8, 1	8, 01
BC-80- 100	21, 11	21, 6	16, 5	13, 1	11, 9	9, 3	8, 4	8, 5
C- 100- 200	14, 65	18, 24	14, 84	12, 28	12, 42	9, 74	9, 7	8, 16
Միջինը	20, 57	19, 96	15, 68	13, 48	11, 88	9, 28	8, 62	7, 98

Վազի բերքատվության կախվածությունը հողի ջրային ռեժիմից ու տերևային մակերեսից (2001թ.)

Աղյուսակ 2

Տարրեր թույլ	Վազի բերքատվությունը (տ/հա)	Ուղեղի մեծ բույսերի վազի վրա (հատ)	Տերևային մակերեսի մեծ վազի վրա (մ ²)			Բերքատու բյուրեր 1 հա-ից (գ/հա)	Մեծ վազի բերքատու բյուրեր (կգ)	Ուղեղի մեծի բույս (գ/հա)	Խառնուրդ շաղկապ որոշումը (%)	Խառնուրդ բերքատվությունը (գ / վազ)
			20 - 25 VI	20 - 25 VII	5 / IX					
Զրուկի	80 - 85	93	10, 7	12, 3	11, 5	181	8, 2	194	22, 4	7, 0
Մեծ կգ խառնուրդի համար տերևային մակերեսը (մ ²)			1, 3	1, 5	1, 1					
Անցյալի	55 - 65	72	5, 16	3, 01	2, 15	93	4, 3	60	16, 4	7, 8
Մեծ կգ խառնուրդի համար տերևային մակերեսը (մ ²)			1, 2	0, 7	0, 5					